ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սույն թվի ապրիլի 30-ին Մոսկվայից Ս. Էջմիածին ժամանեց Ամենայն Հայոց Ազգընտիր Տեղակալ Գերապատիվ Տ. Գեվորգ արքեպիսկոպոս Զեորեքյանը:

***

Մայիսի 7-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոսը վարդապետական կոչում շնորհեց Ներսես աբեղա Տեր-Հովհաննիսյանին, Ներսես Աբրահամյանին և Կարապետ Թումանյանին:

***

Սույն թվի մայիսի 9-ին խաղաղության ներկայությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ազգընտիր Տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Զեորեքյանի և միաբանության մասնակցությամբ Ս. Էջմիածնի Մայր տաճարում զոհարանական մատաղանք կատարվեց պատերազմի հաղթական ավարտման և խաղաղության առնի կապակցությամբ: Մատաղանքից հետո Տ. Տեղակալը շնորհավորական հեռագրերներ ուղարկեց Սովետական Միության Ժողովրդական Նախագահ, Ժողովուրդների Մեծ Առաջնորդ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին, Սովետական Հայաստանի Կենտկոմի քարտուղար Գ. Հարությունյանին, Գերագույն Սովետի Նախագահ Մ. Պապյանին և Ժողկոմսովետի Նախագահ Ա. Ս. Սարգսյանին:

***

Համբարձման օրը, մայիսի 10-ին, Մայր տաճարում տեղի ունեցավ Ս. պատարագ: Պատարագին ներկա էր մեծ բազմություն: Տ. Կարապետ վարդ. Թումանյանը խոսեց Հայրենական պատերազմի նշանակության մասին: Ջերմ զգացումներով նա նկարագրեց մեր ժողովրդի հերոսական պայքարն ընդդեմ դաժան և անողորմ թշնամու և մեր փառավոր ու վերջնական հաղթանակը: Նա գրվատեց այն հերոսական գործերը, որ կատարեց մեր Հայրենիքը պաշտպանող Կարմիր Բանակը և կոչ արեց ժողովրդին՝ աղոթել Բարձրյալին մեր Մեծ առաջնորդ Մեծ Ստալինի արեշատության և Կարմիր Բանակի հզորության համար:

***

Ստացված տեղեկությունների համաձայն կաթողիկոսական ընտրությունների առթիվ տեղի ունենալիք Ազգային եկեղեցական ժողովին մասնակցելու համար Ս. Էջմիածին է ժամանելու Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Տ. Գարեգին Հովսեփյանը:

***

1945 թ. մայիսի 13-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվեց Ս. պատարագ, որից հետո Տ. Տեղակալը ողջ միաբանության մասնակցությամբ հոգեհանդիսա կատարեց Հայրենական մեծ պատերազմում մեր Հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակին: Նախքան հոգեհանդիսաը Կարապետ վարդապետ Թումանյանը ավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նույն օրը Տեր Տեղակալը հեռագրով կարգադրեց բոլոր թեմերին ամսի 20-ին, Հոգեգալստյան օրը, հոգեհանդիսա կատարել պատերազմում զոհվածների հիշատակին:

***

Մայիսի 20-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում վարդապետ ձեռնադրվեց Գրիգոր Հարությունյանը:

***

Առաջիկա սեպտեմբերին բացվում է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը լսարանական և դասարանական բաժիններով: Ճեմարանը կունենա վեցամյա դասընթաց: Ճեմարանը ապահովված է դասական պիտույքներով և կահավորությամբ:

Այդ կապակցությամբ Ամենայն Հայոց կաթողիկոսի Տեղակալ Ամենապատիվ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Զեորեքյանը կարգադրել է շտապ կարգով բերել ճեմարանի դրադարանը: Գրադարանը ապահովված է 30·000 դրքով: